

**ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 261-Ա**

**28 օգոստոսի, 2020 թվական**

**ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 21-ի N 1278-Ա, N 1284-Ա, N 1285-Ա և N 1286-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի օգոստոսի 25-26ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

1) Ա/Ձ «Ռաֆայել Մանասյան», Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 38/2 (ՀՎՀՀ 82026806).

2) Ա/Ձ «Ծովինար Ղևոնդյան», Տավուշի մարզ, ք. Իջևան, Անկախության փող. (ՀՎՀՀ 70992426).

3) Ա/Ձ «Արա Նավասարդյան», Արմավիրի մարզ, գ. Գայ (ՀՎՀՀ 49646287).

4) Ա/Ձ «Հեղինե Դովլաթբեկյան», Տավուշի մարզ, ք. Իջևան, Նալբանդյան փող. 3/3 (ՀՎՀՀ 71026364).

5) «ԳՈՐԴ ՇՈՓ» ՍՊԸ, Սյունիքի մարզ, ք. Ագարակ, սահմանամեծ 11/1 (ՀՎՀՀ 09426647).

6) Ա/Ձ «Ռոզա Մարտիրոսյան», Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Սիսական 50 (ՀՎՀՀ 79808544).

7) Ա/Ձ «Թամարա Գրիգորյան», Վայոց ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, Շահումյան 4 (ՀՎՀՀ 76845222):

2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 28/08/20 13:49:52 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

**Տ. ԱՎԻՆՅԱՆ**